

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2025-2026 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

18 ապրիլի 2026թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 14-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի հեռակա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանի ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավարի փոփոխության հարցը:
2. Ֆարմացիայի ինստիտուտի 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման ուսանողների առցանց հարցումների արդյունքների քննարկման հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի հեռակա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանի ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավարի փոփոխության հարցը:

Լսեցին՝ Գիտխորհրդի նախագահ, ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյանին, ով ներկայացրեց նիստի օրակարգը: Նա ներկաներին հաղորդեց այն մասին, որ 2022թ.-ին Անժելա Հարությունյանի գիտական ղեկավար էր հաստատվել կ.գ.դ., պրոֆեսոր Զոն Սարգսի Սարգսյանը: Վերջինիս մահվան հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել հաստատել ատենախոսական աշխատանքի նոր գիտական ղեկավար:

Ելույթ ունեցավ նաև Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ Հովիկ Փանոսյանը, ով տեղեկացրեց, որ հարցը քննարկվել է ամբիոնի նիստում և քանի որ ատենախոսության թեմայով զբաղվող անձանց շրջանում ոչ ոք չունի ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ ատենախոսություն ղեկավարելու համապատասխան թույլտվություն, որոշվել է որպես Անժելա Հարությունյանի գիտական ղեկավարի թեկնածու առաջադրել իրեն՝ Ն. Փանոսյանին:

Որոշեցին՝ (միաձայն) բաց քվեարկությամբ Անժելա Տիգրանի Հարությունյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ և «Պարկինսոնի հիվանդության մոդելի վրա ամիգդալայում սինապտիկ պրոցեսների մորֆոֆունկցիոնալ ուսումնասիրությունը հիդրոկորտիզոնի ազդեցության պայմաններում» վերնագրով թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար հաստատել կ.գ.դ., պրոֆեսոր Հովիկ Հարությունի Փանոսյանին:

2. Ֆարմացիայի ինստիտուտի 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման ուսանողների առցանց հարցումների արդյունքների քննարկման հարցը:

Լսեցին՝ գիտական խորհրդի նախագահ Ա. Մկրտչյանի, ով ներկայացրեց ուսանողական հարցման արդյունքների ընդհանուր պատկերը, նշեց, որ ընդհանուր առմամբ ուսանողները բարձր են գնահատել ինստիտուտի գրասենյակի և պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքները, սակայն իհարկե կան որոշ բացառիկ դեպքեր, որոնց ուղղությամբ դեռ պետք է աշխատել: Դեռևս շարունակում է ուսանողների ցածր մասնակցությունը հարցմանը, ինչի ուղղությամբ որոշակի աշխատանքներ տարվել են և հույս հայտնեց, որ դրանք կտան ցանկալի արդյունք և ուսանողական հարցումները ավելի ճշգրիտ կարտացոլեն իրավիճակը:

Որոշեցին՝ տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

3. Ընթացիկ հարցեր:

3.1. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից անցկացվող «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2026» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների կողմից ներկայացվող հայտերի քննարկման և երաշխավորման հարցը:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Հովիկ Հարությունի Փանոսյանին, ով ներկայացրեց «Էքստրիմ-ֆարմա. էքստերմոֆիլ մանրէներից ստացված էկզոպոլիսախարիդների (էպս) ուսումնասիրությունն և ֆունկցիոնալ բնութագրում՝ նոր դեղագործական կիրառությունների համար» վերնագրով հայտը և դրա շրջանակներում նախատեսված աշխատանքները և ակնկալվող արդյունքները: Նա տեղեկացրեց, որ հայտի դեկավարը Իտալիայի Նեապոլի Կենսամոլեկուլային քիմիայի ինստիտուտի պրոֆեսոր Աննառիտա Պոլին է, համադեկավարը՝ Կենսաբանության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Դիանա Ղևոնդյանը: Հ. Փանոսյանը նշեց, որ նախագիծը նպատակ ունի ուսումնասիրել էքստերմոֆիլ միկրոօրգանիզմների արտադրած էկզոպոլիսախարիդները (ԷՊՍ) և դրանց կիրառությունը դեղագործության մեջ: Աճող հակամանրէային դիմադրության, առկա դեղամատակարարման համակարգերի սահմանափակումների և կենսահամատեղելի նյութերի պահանջարկի պայմաններում ԷՊՍ-ները ներկայացնում են կայուն այլընտրանք: Էքստրեմալ պայմաններում ձևավորված բարձր կայունությունն ու ֆունկցիոնալ բազմազանությունը դրանք դարձնում են հեռանկարային՝ դեղերի առաքման համակարգերի, նանոկրիչների, հակամանրէային և իմունոմոդուլացնող միջոցների, ինչպես նաև վերքերի ապաքինման նյութերի ստեղծման համար: Հայաստանը հարուստ է բազմազան էքստրեմալ էկոհամակարգերով (երկրաջերմային աղբյուրներ, աղակալված և ալկալային միջավայրեր, քարանձավներ, բարձրալեռնային գոտիներ), որոնք հանդիսանում են եզակի մանրէաբանական բազմազանության աղբյուր: Նախագծի նպատակն է առանձնացնել և բնութագրել ԷՊՍ արտադրող մանրէները և գնահատել դրանց դեղագործական ներուժը: ԷՊՍ-ները կստացվեն, կմաքրվեն և կուսումնասիրվեն՝ դրանց կառուցվածքի, կենսաբանական ակտիվության և նանոկառուցվածքներ ձևավորելու ունակության տեսանկյունից: Արդյունքում կստեղծվի մանրէների հավաքածու և կբացահայտվեն բարձր արժեք ունեցող ԷՊՍ-ներ՝ նպաստելով նորարարական կենսանյութերի մշակմանը: Կձևավորվի «EXTREME-PHARMA» խումբը:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել «Էքստրիմ-ֆարմա. էքստերմոֆիլ մանրէներից ստացված էկզոպոլիսախարիդների (էպս) ուսումնասիրություն և ֆունկցիոնալ

բնութագրում՝ նոր դեղագործական կիրառությունների համար» վերնագրով հայտը՝ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2026» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի «Դեղերի որակի հսկման և մոնիթորինգի գիտատնտեսական կենտրոնի» փորձագետ ք.գ.թ. Լուսինե Սերգեյի Հայրապետյանին, ով ներկայացրեց «Շրջակա միջավայրի առողջությունը և ոռոգման ջրի որակը Հայաստանում. ինտեգրված գնահատում և հետազոտական կարողությունների զարգացում» վերնագրով հայտը շրջանակներում նախատեսված աշխատանքները և ակնկալվող արդյունքները: Լ. Հայրապետյանը տեղեկացրեց, որ հայտի դեկավարը ԳԴ Հելմհոլցի շրջակա միջավայրի հետազոտությունների կենտրոնի Ջրի վերլուծության և քիմիաչափության կենտրոնական լաբորատորիայի վարիչ, բնական գիտությունների դոկտոր Վոլֆ ֆոն Թյումպլինգն է, իսկ համադեկավարը ինքն է:

Նա կարևորեց այն հանգամանքը, որ ոռոգման ջրի որակը առանցքային գործոն է, որը կապում է գյուղատնտեսական արտադրողականությունը սննդամթերքի անվտանգության և հանրային առողջության հետ: Հայաստանում, որտեղ գյուղատնտեսությունը մեծապես կախված է ոռոգումից, ջրի սակավության, աղակալման և աղտոտման աճող ներգործությունը վտանգավոր են դառնում կայուն սննդարտադրության և մարդու առողջության համար: Ներկայումս ոռոգման ջրի կազմը հողի գործընթացների, բույսերի աճի և աղտոտիչների սնունդ փոխանցման հետ կապող ինտեգրված ուսումնասիրությունները դեռևս սահմանափակ են: Սույն նախագիծը նպատակ ունի ստեղծել միջառարկայական հետազոտական շրջանակ՝ ջուր-հող-բույս շղթայի և դրանց ազդեցության գնահատման համար սննդի անվտանգության և շրջակա միջավայրի առողջության վրա: Դաշտային մոնիթորինգը և վերահսկվող փորձերը կմիավորվեն առաջադեմ անալիտիկ մեթոդների հետ՝ որոշելու սննդանյութերը, հետքային տարրերը և նոր առաջացող աղտոտիչները, ներառյալ պեստիցիդների և հակաբիոտիկների մնացորդները: Կարևոր ուղղություններից է անալիտիկ կարողությունների զարգացումը՝ հետքային քանակների հայտնաբերման և առողջապահական ռիսկերի գնահատման վերլուծական կարողությունների զարգացումը: Նախագիծը կնպաստի ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտում նոր գիտական ուղղության և

լաբորատոր հարթակի ստեղծմանը՝ համադրելով շրջակա միջավայրի քիմիան և դեղագործական գիտությունները: Սպասվող արդյունքները կներառեն մոնիթորինգի ռազմավարությունների բարելավում, ապացույցների վրա հիմնված առաջարկություններ և շրջակա միջավայրի առողջության հետազոտությունների ազգային կարողությունների ամրապնդում:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել «Շրջակա միջավայրի առողջությունը և ոռոգման ջրի որակը Հայաստանում. ինտեգրված գնահատում և հետազոտական կարողությունների զարգացում» վերնագրով հայտը՝ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2026» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝
ք.գ.թ, դոցենտ

Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
ք.գ.թ., դոցենտ

Ա. Դադայան